

# Կոտայքի մարզպետարանը ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է հայեցողական թափուր պաշտոնի մասին

ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ

Յիմնական գործառնություններ ու պարտականություններ

1. Մարզպետին կազմակերպչական, տեղեկատվական և տեխնիկական աջակցության ցուցաբերում
2. Ոլորտային վերլուծությունների, հետազոտությունների իրականացում, խնդիրների վերհանում
3. Մարզպետի խորհրդակցությունների, հանդիպումների կազմակերպում և դրանց մասնակցություն
4. Մարզպետի հանձնարարությամբ համագործակցություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, շահառու խմբերի ու անձանց հետ
5. Մարզպետարանի ստորաբաժանումների աշխատակիցների հետ մարզպետի հանձնարարականներին և հրամաններին առնչվող աշխատանքների համակարգում
6. Քաղաքացիների հետ պատշաճ հաղորդակցության իրականացում
7. Պաշտոնեական պարտականություններից բխող այլ հանձնարարականների կատարում

Պահանջվող որակավորումներ և հմտություններ

1. Բարձրագույն կրթություն՝ ցանկալի է տնտեսագիտության, իրավագիտության, սոցիոլոգիայի և հարակից ոլորտներում
2. Հայերեն, անգլերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր խոսքի վարժ տիրապետում
3. Համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
5. Միջանձնային հարաբերություններ կառուցելու և հաղորդակցման գերազանց հմտություններ
6. Ժամանակի արդյունավետ կառավարման, առաջնահերթ առաջադրանքները երկրորդականից տարբերելու և սահմանված վերջնաժամկետները պահպանելու ունակություն
7. Բարձր պատասխանատվության, նախաձեռնողականության և ստեղծարար մտածելակերպի դրսևորում
8. Աշխատանքային փորձը ցանկալի է, միջազգային կազմակերպություններում աշխատելու փորձը կդիտվի որպես առավելություն

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 10.07. 2019թ.

Աշխատանքի վայրը՝ ք. Հրազդան

Դիմող ՀՀ քաղաքացիները կարող են իրենց ինքնակենսագրական տվյալները (CV) հայերենով ուղարկել [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am) էլ. հասցեին: